

## ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/4

22 մարտի 2016 թ.

Քննարկվեց «Փոստ Պրինտ» ՍՊԸ 16.02.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 10.02.2016թ-ի թիվ 579/5 գրության դեմ:

### «Փոստ Պրինտ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

05.02.2016 թվականին ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ հաստատման է ներկայացվել դիմում՝ «Գործատուին փոխհատուցման ենթակա գումարների մասին» տեղեկանքը հատատելու համար, որը 10.02.2016 թվականի թիվ 579/5 գրության համաձայն մերժվել է, այն պատճառաբանությամբ, որ չի պահպանվել ՀՀ Կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի թիվ 1024-Ն որոշմամբ հաստատված վարձու աշխատողների ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստները վճարելու համար գործատուի ծախսած դրամական միջոցները փոխհատուցելու կարգի 5-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները:

Համաձայն վերը նշված կարգի 5-րդ կետի 3-րդ ենթակետի տեղեկանքը հաստատելը մերժվում է, եթե՝ նպաստը հաշվարկվել, նշանակվել և վճարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ կամ նպաստի հաշվարկման մեջ առկա է թվաբանական սխալ, և հարկային մարմնի կողմից կատարված վերահաշվարկի արդյունքում պարզվում է, որ առկա չէ փոխհատուցման ենթակա գումար կամ առկա է այլ գումար:

Վերը նշված ենթակետով ամրագրված նորմի իրավական վերլուծությունից կարելի է գալ այն հետևության, որ տեղեկանքը հաստատելը մերժվում է հետևյալ երկու պայմաններից թեկուզ և մեկի առկայության դեպքում, եթե՝

1. նպաստը հաշվարկվել, նշանակվել և վճարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ, կամ

2. նպաստի հաշվարկման մեջ առկա է թվաբանական սխալ, և հարկային մարմնի կողմից կատարված վերահաշվարկի արդյունքում պարզվում է, որ առկա չէ փոխհատուցման ենթակա գումար կամ առկա է այլ գումար:

Նույն կարգի 4-րդ կետի համաձայն հարկային մարմինը 10 օրացուցային օրվա ընթացքում ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկատվությունը, նպաստի հաշվարկման, նշանակման և վճարման համապատասխանությունն օրենքին, հաստատում (կնքում) է տեղեկանքը և վերադարձնում գործատուին՝ սույն կարգով սահմանված դեպքում նշելով փոխհատուցման ենթակա գումարը կամ գրավոր մերժում է տեղեկանքը հաստատելը՝ նշելով մերժման պատճառը և գործատուի հետագա գործողությունները:

Այսպես, «Գործատուին փոխհատուցման ենթակա գումարների մասին» տեղեկանքը մերժելով, ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետք մերժման մեջ հստակ չի նշել, թե վերը նշված կարգի 5-րդ կետի 3-րդ ենթակետով ամրագրված նորմի պահանջներից որն է խախտվել, և որոնք պետք է լինեն գործատուի հետագա գործողությունները:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1 հոդվածով, «Փոստ Պրինտ» ՍՊԸ-ն խնդրում է սույն դիմում-գանգատի վերաբերյալ սահմանված կարգով կայացնել համապատասխան որոշում:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ «Փոստ Պրինտ» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) կողմից 18.01.2016թ-ին իր աշխատակցին վճարվել է մայրության նպաստ: Այնուհետև, 05.02.2016թ-ին ընկերության կողմից ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ է ներկայացվել «Գործատուին փոխհատուցման ենթակա գումարների մասին» տեղեկանքը՝ հատատելու համար: Նշված տեղեկանքի համաձայն փոխհատուցման գումարը կազմել է 96.828 դրամ: Սակայն, ընկերության կողմից հունվար ամսվա համար ներկայացված «Եկամտային հարկի և սոցիալական ապահովության վճարի ամփոփ հաշվարկ»-ի ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանում եկամտային հարկի գումարը կազմել է 194.384 դրամ, այդ թվում՝ վարձավճար, գումարով 52.654 դրամ, որը «Գործատուին փոխհատուցման ենթակա գումարների մասին» տեղեկանքում արտացոլված չի եղել:

Վերոգրյալից հետևում է, որ «Գործատուին փոխհատուցման ենթակա գումարների մասին» տեղեկանքում փոխհատուցման ծախսի գումարը պետք է կազմեր ոչ թե 96.828 դրամ, այլ՝ 44.174 դրամ (96.828-52.654): Արդյունքում, ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 10.02.2016թ-ի թիվ 579/5 գրությամբ ընկերության պահանջը մերժվել է:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ խնդրո առարկա հարցին լուծում տալու նպատակով ընկերությանն անհրաժեշտ է ներկայացնել «Գործատուին փոխհատուցման ենթակա գումարների մասին» ճշգրտված տեղեկանք, դրանում արտացոլելով փոխհատուցման ենթակա իրական գումարը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո թ ո շ ու մ է՝**

«Փոստ Պրինտ» ՍՊԸ 16.02.2016թ-ի գանգատը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ